

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

1988-1998 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ 1988-1998 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 300

Աշխատանքը երաշխավորվել է
ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդի և Հայաստանի
հարակից երկրների պատմության ամբիոնի կողմից:

Խմբագիրներ՝
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արսեն Ավագյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդուարդ Զոհրաբյան

Գրախոսներ՝
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտավազդ Դարբինյան
Պատմական գիտությունների թեկնածու Դավիթ Ափինյան

Տաթևիկ Հայրապետյան
Հ 300 Ներքաղաքական գործընթացները Ադրբեջանում 1988-1998 թվականներին/Տ. Հայրապետյան, Եր., ԵՊՀ հրատ., 2018, 178 էջ:

Աշխատության մեջ քննության են առնվում 1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի հիմնական առանձնահատկությունները, իշխանություն-ընդդիմություն պայքարի խորքային պատճառները, ներիշխանական և ներընդդիմադիր ճամբարներում առկա բազմաթիվ հակասությունները, ինչպես նաև Ադրբեջանի ներքաղաքական գործընթացների ու դարաբաղյան ճակատում ընթացող ռազմական գործողությունների փոխներգործությունը:

Մենագրությունում ներկայացված փաստերը, աղբյուրները և դրանց հիման վրա արված եզրակացությունները նախատեսված են պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների, ազգագրագետների, թուրքագետների, իրանագետների և ադրբեջանագետների համար: Աշխատության մեջ առաջադրված դրույթները կարող են օգտագործվել նաև հատուկ դասընթացների դասավանդման ժամանակ, մասնավորապես դարաբաղյան հակամարտության և Ադրբեջանի պատմության ուսումնասիրության շրջանակներում:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2307-7

© ԵՊՀ հրատ., 2018
© Տ. Հայրապետյան, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ I
ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ
(1988-1990 ԹԹ.) 15

ԳԼՈՒԽ II
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՅԱԶ
ՄՈՒԹԱԼԻԲՈՎԻ ԵՎ ԱԲՈՒԼՖԱԶ ԷԼՉԻԲԵՅԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-1993 ԹԹ.) 64

ԳԼՈՒԽ III
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՅԴԱՐ ԱԼԻԵՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ՇՐՋԱՆՈՒՄ (1993-1998 ԹԹ.) 112

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 154

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 163

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական զարգացումները բնորոշվում են ոչ միայն իշխանության և ընդդիմության միջև ընթացող սուր պայքարով, այլև ներիշխանական և ներընդդիմադիր ճամբարներում առկա լուրջ հակասություններով: Այդ գործընթացներում որոշիչ նշանակություն ուներ Լեռնային Ղարաբաղի գործոնը:

1988 թ. սկզբին Ադրբեջանի կոմունիստական վարչակարգին այլընտրանք հանդիսացող քաղաքական ուժերի ձևավորման գլխավոր ազդակը եկավ Լեռնային Ղարաբաղից: Ադրբեջանի անկախացմանը նախորդող ժամանակաշրջանը նշանավորվեց այդ երկրի ներքաղաքական կյանքում ընթացող բուռն զարգացումներով և ադրբեջանական ազգայնականության վերակենդանացմամբ, որը կարճ ժամանակ անց վերաճեց ազգայնամոլության՝ «պարարտ հող» ստեղծելով Սումգայիթի, Կիրովաբադի (Գանձակի), Բաքվի հայկական կոտորածների կազմակերպման և իրականացման համար: Անկախացումից հետո (1991 թ. օգոստոս) Ադրբեջանը թևակոխեց քաղաքական պայքարի նոր փուլ: Ակտիվ պայքար էր ընթանում կոմունիստական վարչակարգի նախկին ներկայացուցիչ, Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովի և «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» (հետայսու՝ ԱԺՃ) կուսակցության ղեկավար Աբուլֆազ Էլչիբեյի միջև: Ա. Մութալիբովի հրաժարականն ու Ա. Էլչիբեյի՝ Ադրբեջանի նախագահ դառնալը ավելի խորացրին Ադրբեջանի ներքաղաքական պառակտվածությունը և հանգեցրին նոր հակասությունների առաջացմանը: Իրադրությունը փոխվեց 1993 թ. Հեյդար Ալիևի՝ երկրի իշխանությունը ստանձնելուց հետո: Ներքաղաքական իրավիճակի որոշակի կայունացումը նշանավորվեց Լեռնային Ղարաբաղում լայնածավալ պատերազմական գործողությունների դադարեցմամբ և 1994 թ. հրադադարի մասին պայմանագրի կնքմամբ, ընդդիմադիր դաշտի թուլացմամբ, ինչպես նաև երկրի կառավարման նախագահակենտրոն համակարգի ներդրմամբ և հետագայում անձի պաշտամունքի ձևավորմամբ:

Մենագրությունը հիմնականում ընդգրկում է 1988-1998 թթ. Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների պատմական ժամանակաշրջանը՝ մեկնակետ ընդունելով 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ-ի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված «ԼՂԻՄ-Ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ տեղափոխելու հարցով Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդության մասին» հայտնի որոշումը, որը խորհրդանշեց ղարաբաղյան խնդրի վերաբացումն ու պայմանավորեց քաղաքական զարգացումների հետագա ընթացքը: Ներառելով Ադրբեջանի ներքաղաքական կյանքում այդ որոշմանը հաջորդած իրադարձությունների տասնամյակը՝ ուսումնասիրության ժամանակագրությունը հասնում է մինչև 1998 թվականը՝ Հեյդար Ալիևի նախագահության առաջին շրջանի ավարտը և նոյեմբերին կայացած նախագահական ընտրություններում նրա վերընտրվելը:

Մենագրության մեջ վերլուծության են ենթարկվում 1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի հիմնական առանձնահատկությունները, իշխանություն-ընդդիմություն պայքարի խորքային պատճառները, ներիշխանական և ներընդդիմադիր ճամբարներում առկա բազմաթիվ հակասությունները, ինչպես նաև ներքաղաքական գործընթացների ու ղարաբաղյան ճակատում ընթացող ռազմական գործողությունների փոխներգործությունը: Հետազոտվում են այն հիմնական գործոնները, որոնք վերակառուցման տարիներին նպաստեցին Ադրբեջանում ազգայնականության վերելքին: Բացահայտելով ադրբեջանական ազգայնականության գաղափարական հիմքերն ու բնորոշ առանձնահատկությունները՝ դիտարկվում են ազգային ինքնության հիմնական հայեցակարգերը և դրանց փոխակերպումները: Ներկայացվում են 1988 թ. քաղաքական ասպարեզում հայտնված, կոմունիստական վարչակարգին այլընտրանք հանդիսացող հիմնական քաղաքական ուժերի ու կուսակցությունների գաղափարախոսական առանձնահատկությունները: Մենագրության մեջ անդրադարձ է կատարվում Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովի վարած ներքին քաղաքականության հետևանքով

երկրում ստեղծված իրադրությանը և վերջինիս ազդեցությանը ղարաբաղյան ճակատում ընթացող ռազմական գործողությունների ընթացքի վրա, բացահայտվում են Ա. Մութալիբովի հրաժարականի հիմնական պատճառները: Վեր են հանվում «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության (Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ) քաղաքական հաղթանակի հիմքերը և գործունեության հետևանքները: Մասնավորապես ներկայացվում են ԱԺՃ որդեգրած թյուրքականության գաղափարախոսության պատճառով Ադրբեջանում բնակվող ազգային փոքրամասնությունների (հատկապես լեզգիների և թալիշների) շրջանում առաջացած դժգոհությունները, ինչպես նաև արտաքին քաղաքականության ասպարեզում Իրանի և Ռուսաստանի հետ ունեցած խնդիրները:

Անդրադառնալով Ա. Էլչիբեյի տապալման հիմնական պատճառներին և Հեյդար Ալիևի քաղաքական վերադարձի նախադրյալներին՝ աշխատության մեջ վերլուծության են ենթարկվում ղարաբաղյան պատերազմի դադարեցման, 1994 թ. հրադադարի մասին պայմանագրի կնքման հիմնական պատճառները: Ներկայացվում են Հեյդար Ալիևի ձևավորած քաղաքական համակարգը, զինվորական ընդդիմության վերացմանն ուղղված քայլերը, քաղաքական հակառակորդներից ազատվելու գործելաոճը:

Այսպիսով՝ 1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական գործընթացների համակողմանի վերլուծության միջոցով մենագրության մեջ բացահայտվում են դեպքերի զարգացման պատճառահետևանքային կապերն ու ներքին տրամաբանությունը: Ադրբեջանի մինչանկախական և հետանկախական ժամանակահատվածների քաղաքական համապատկերի, ազգայնամոլության վերաճած ադրբեջանական ազգայնական գաղափարախոսության համատեքստում բացահայտվում են հակահայկական և ագրեսիվ տրամադրությունների արմատավորման ու տարածման հետևանքները:

Աշխատությունը շարադրելիս, որպես ուսումնասիրվող տասնամյակում Ադրբեջանի ներքաղաքական իրադարձությունների ընթացքի և ժամանակագրության վերականգման սկզբնաղբյուրներ,

օգտագործվել են պաշտոնական վիճակագրական տվյալները, հրապարակված պետական փաստաթղթերն ու որոշումները, ինչպես նաև միջազգային հեղինակավոր կազմակերպությունների զեկույցները: Օգտագործվել են նաև այդ տարիների խորհրդային, հետագայում՝ ռուսական, ադրբեջանական և հայկական մամուլի հրապարակումները, մասնավորապես «Известия», «Красная Звезда», «Комсомольская правда», «Аргументы и факты», «Московские Новости», «Бакинский рабочий», «Правда», «Советский Карабах», «Собеседник», «Ազգ» պարբերականները, ինչպես նաև ցարական ժամանակաշրջանում հրատարակվող «Баку» (1911 թ.) թերթը: Պարբերական մամուլի հրապարակումներն օգտագործելիս հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ խորհրդային մամուլի գնահատականները կոմունիստական հասարակարգին «խորթ երևույթների» վերաբերյալ ամենևին միանշանակ չէին: Նախ՝ ադրբեջանցիների կողմից ազգային հողի վրա կատարվող ոճրագործությունները, որպես կանոն, որակվում էին որպես «խուլիգանական» տարրերի հանցանքներ: Երկրորդ՝ ընթերցողին ներկայացվում էր «կես ճշմարտությունը», այսինքն՝ տրվում էր դեպքերի դիպվածային, ընտրովի, մակերեսային նկարագրությունը: Եվ երրորդ՝ ադրբեջանցիների կողմից հայ բնակչության հանդեպ իրականացվող ոճրագործությունները քողարկվում էին ժողովուրդների «եղբայրության և բարեկամության» կեղծ կոչերով: Հարկ է նշել, որ գորբաչովյան վերակառուցման և հրապարակայնության ժամանակաշրջանում մամուլը, այնուամենայնիվ, սկսել էր անդրադառնալ կոմունիստական հասարակարգի որոշ ցավոտ երևույթներին, ընդ որում՝ այդ համատեքստում երբեմն արտահայտվում էին կուսակցական ընտրախավի ներսում առկա գաղափարական հակասությունները: Դա, ինքնին վերցրած, աննախադեպ երևույթ էր Խորհրդային Միության պատմության մեջ:

Ադրբեջանի անկախացումից հետո նախագահի պաշտոնը ստանձնած քաղաքական գործիչներ Այազ Մութալիբովի, Աբուլֆազ Էլչիբեյի և Հեյդար Ալիևի վարած քաղաքականության և հայացքների վերաբերյալ հնարավորինս ամբողջական պատկերացում ձևավորե-

լու նպատակով ուսումնասիրվել են երեք նախագահների հարցազրույցները[1], ելույթները[2], ինչպես նաև նրանց գործունեությանը վերաբերող փաստավավերագրական ֆիլմերը[3]: Ա. Էլչիբեյի ազգայնամոլական հայացքների ներկայացման համար ուսումնասիրվել են նրա հեղինակած աշխատությունները[4], որոնք բացառիկ աղբյուր են ադրբեջանական թյուրքականության գաղափարախոսության վերլուծության համար: Մենագրությունում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել ադրբեջանական «ANS TV» հեռուստաընկերության՝ «Ən Yeni Tarix» («Նորագույն պատմություն») ադրբեջանալեզու հաղորդաշարը[5], որտեղ հետադարձ հայացք է նետվում 1988-1994 թթ. ներքաղաքական զարգացումների և իշխանությունների գործած սխալների վրա: Հաղորդաշարը հյուրընկալում է գերազանցապես ժամանակաշրջանի գործող պաշտոնատար անձանց, այդ թվում՝ Այազ Մութալիբովին, Աբուլֆազ Էլչիբեյին, Նեմեթ Փանահովին, Էթիբար Մամեդովին, Սուրաթ Հուսեյնովին և այլոց:

---

[1] Ayaz Mütəllibov: «Bunu birinci dəfə sizə danışıram», http://www.azadliq.org/content/article/24926491.html, 12.03.2013.

[2] Выступление президента Азербайджанской Республики Гейдара Алиева по национальному телевидению и радио - 3 октября 1994, http://lib.aliyev-heritage.org/ru/4547485.html, 7.01.2016.

Обращение к народу президента Азербайджанской Республики Гейдара Алиева по национальному радио и телевидению - 15 марта 1995, http://lib.aliyev-heritage.org/ru/7029330.html, 1.15.2016.

Заявление Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на встрече государственного секретаря Соединенный Штатов Америки Колина Паэлла с Президентами Азербайджанской Республики и Республики Армения, с сопреседателями Минской группы ОБСЕ - Ки Уэст, 3 апреля 2001, http://lib.aliyevheritage.org/ru/9130794.html, 12.01.2016.

[3] Հեյդար Ալիևի՝ 1993 թ. ռուսական РТР հեռուստաալիքի «Момент истины» հաղորդման վարողին տված հարցազրույցը, https://www.youtube.com/watch?v=kK0wm-mQt3g, 5.01.2016.

Heydar Aliyev, Surat Huseynov, ANS, Ən Yeni Tarix, https://www.youtube.com/watch?v=vm4zj5xXI8Y, 3.01.2016.

1994 cu il Oktyabır hadisələri haqqında veriliş (Rövşən və Mahir Cavadovlar), ANS, Ən Yeni Tarix, https://www.youtube.com/watch?v=2L38Q-Fqlcs, 10.01.2016.

[4] **Əbülfəz Elçibəy**, Milli kimliyimizin təmelləri haqqında, Birici bölüm.

[5] ANS TV, Ən Yeni Tarix, Buraxılışlar, http://www.anstv.ws/site/tvshows/137-an-yeni-tarix, 21.02.2015.

Հաղորդաշարի նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ադրբեջանական աղբյուրների միջոցով լուսաբանելու Ադրբեջանի ներքին կյանքի նրբությունները, բացահայտելու ղարաբաղյան պատերազմում ադրբեջանական զինված ուժերի որոշ գործիչների կողմից իրագործված դավաճանությունները, վերհանելու ռազմական հրամանատարության ներսում առկա հակասությունները, ինչպես նաև իրական պատկերացում կազմելու Բաքվում հայերի հանդեպ տարվող «ընդհատակյա» քաղաքականության վերաբերյալ:

Մենագրության մեջ արծարծվող հիմնախնդիրներին տարբեր ժամանակներում անդրադարձել են հայ և օտարերկրացի, այդ թվում՝ ադրբեջանցի հեղինակներ: «Ադրբեջանական» ազգայնականության ակունքների ուսումնասիրության առումով հետաքրքրական են Այդընն Բալաևի, Իրադա Բաղիրովայի և Էլդար Ազիզովի աշխատությունները: Հայ-թաթարական բախումների պատճառներին, «ադրբեջանական» ազգայնականության ձևավորման ակունքներին և 20-րդ դարասկզբի պատմական դեպքերի բնույթին վերաբերող մեկնաբանություններում ադրբեջանցի հեղինակները հաճախ դրսևորում են միակողմանի մոտեցում: Այդուհանդերձ, նրանց աշխատություններում երբեմն ներկայացվում են պատմական ուշագրավ իրողություններ, երբեմն էլ փաստերի ճնշման ներքո վերոնշյալ հեղինակները հանգում են պատմական իրադրությանը համարժեք հետևությունների: Այսպես՝ Ա. Բալաևի աշխատություններում[6] թեև բացակայում է 20-րդ դարասկզբի իրադարձությունների գնահատման համարժեք մոտեցումը, սակայն ընդգծվում է, որ հայ-թաթարական բախումները կա-

---

[6] Տե՛ս **Балаев А.,** Азербайджанская нация: основные этапы становление на рубеже XIX-XX вв., Москва, ООО «ТиРу», 2012, 403 էջ:

Балаев А., Азербайджанское национальное движение в 1917-1918 гг., Баку, «Елм», 1998, 280 с.

Балаев А., Мамед Эмин Расулзаде (1884-1955), Москва, Издательство «Флинта», 2009, 288 с.

Балаев А., Народный фронт Азербайджана. Историческая хроника: 1988-1991, журнал «Страна и мир», №2, Мюнхен, 1991.

ընոր ազդակ են եղել «ադրբեջանցիների» ազգակերտման գործընթացի համար: Ի. Բաղիրովայի աշխատությանը[7] ևս պետք է մոտենալ վերապահումներով, սակայն այն հետաքրքրական է 20-րդ դարի սկզբին՝ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (հետայսու՝ ԱԴՀ) ձևավորման նախօրեին գործող քաղաքական տարբեր ուժերի և դրանց գաղափարախոսությունների ներկայացման տեսանկյունից: «Ադրբեջանական» ազգայնականության ձևավորման գործընթացում հայերի ունեցած դերի ընկալման առումով ուշագրավ է Էլդար Ազիզովի աշխատությունը[8]՝ նվիրված «Դիֆայի»[9] («Կովկասի համամուսուլմանական պաշտպանական կոմիտե») կոչվող գաղտնի խմբավորման պատմության և գաղափարախոսության ուսումնասիրությանը:

Դարասկզբին ազգային գաղափարախոսական հայեցակարգում իսլամականությունից թյուրքականության անցման շրջանի առանձնահատկությունների ուսումնասիրման, ինչպես նաև Մամեդ Էմին Ռասուլզադեի, Ալիմարդան բեկ Թոփչիբաշևի և այլոց հայացքների ներկայացման տեսակետից հետաքրքրական է լեհ պատմաբան Թադեուշ Սվիտոխովսկու աշխատությունը[10]: Հեղինակի հիմնական նպատակն է 1905 թ. ռուսական հեղափոխության համատեքստում ուսումնասիրել Հարավային Կովկասի մահմեդականների շրջանում ի հայտ եկած գաղափարախոսությունները և դրանց հարող անձանց գործունեությունը: Այդուհանդերձ, Թ. Սվիտոխովսկին անտեսում է այն պատմական իրողությունը, որ մինչև 1918 թ. մայիս տարածաշրջանում «Ադրբեջան» անունով պետություն գոյություն չի ունեցել:

---

[7] Տե՛ս **Багирова И.,** Политические партии и организации Азербайджана в начале века: 1900-1917, Баку, «Елм», 1997, 336 էջ:

[8] Տե՛ս **Əzizov E.,** Difai, XX əsrin əvvəllərində erməni-azərbaycanlı münaqişəsinin ilkin tarixi şərtləri və səbəbləri, Bakı-2009, 364 էջ:

[9] Կազմակերպության «Difai» անվանումը առաջացել է ադրբեջաներեն «müdafiə» բառից, որը թարգմանաբար նշանակում է «պաշտպանություն»:

[10] Տե՛ս **Swietochowski T.,** Russian-Azerbaijan 1905-1906: The Shaping of National Identity in a Muslim Community, London, 2004, 256 էջ:

Ղարաբաղյան շարժման և պատերազմի տարիներին Ադրբեջանում ծավալվող դեպքերի ուսումնասիրման տեսանկյունից կարևոր են տարբեր հետազոտողների, ինչպես նաև օտարերկրյա լրագրողների՝ տարածաշրջան կատարած այցերի հիման վրա արված վերլուծություններն ու մեկնաբանությունները: Այսպես՝ 1980-ականների վերջին ղարաբաղյան խնդրի բարձրաձայնման, ինչպես նաև Ադրբեջանում ձևավորվող քաղաքական հոսանքների և խմբավորումների, առաջին հերթին՝ «Ադրբեջանի ժողովրդական ճակատ»-ի պատմության ու գաղափարախոսության ուսումնասիրման առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Թոմաս Գոլցի[11], Թոմաս դե Վաալի[12], Սվանթե Քորնելի[13], Սուհա Բոլուքբաշիի[14], Շրին Հանթերի[15], Բրենդա Շաֆերի[16], ինչպես նաև հայ հեղինակներ Թաքուլ Հակոբյանի[17], Վիգեն Չեթերյանի[18], Բագրատ Ուլուբաբյանի[19] և ադրբեջանցի

---

[11] Տե՛ս **Goltz Th.,** Azerbaijan Diary: A Rogue Reporter's Adventures in an Oil-Rich, War-Torn, Post Soviet Republic, M. E, Sharpe, Armonk, New York, London, England, 1999, 496 էջ:

[12] Տե՛ս **Thomas de Waal,** Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York and London, 2003, 337 էջ:

[13] Տե՛ս **Cornell S.,** Nagorno Karabakh conflict, Uppsala University, 1999, 162 էջ:
Տե՛ս **Cornell S.,** Azerbaijan since Independence, Armonk, New York, 2011, 485 էջ:
Տե՛ս **Cornell S.,** Small Nations and Great Powers: A study of ethnopolitical conflict in the Caucasus, Richmond: Curzon Press, 2001, 341 էջ:

[14] Տե՛ս **Bolukbasi S.,** Azerbaijan: A Political History, I.B. Tauris, New York, 2011, 282 էջ:

[15] Տե՛ս **Hunter Sh.,** The Transcaucasus in Transition: National Building and Conflict, Significant Issues Studies, Volume XVI, Number 7, The Center for Strategic and International Studies, Washington D.C., 1994, 223 էջ:

[16] Տե՛ս **Shaffer B.,** Borders and Brethren, Iran and the Challenge of Azerbaijan Identity, London, 2002, 248 էջ:

[17] Տե՛ս **Հակոբյան Թ.,** Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, Հեղինակային հրատարակություն, 2008, 584 էջ:

[18] Տե՛ս **Cheterian V.,** War and Peace in the Caucasus: Ethnic Conflict and the New Geopolitics, Columbia University Press, New York, 2009, 395 էջ:

[19] Տե՛ս **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, «Մ. Վարանդեան», 1994, 378 էջ:

հեղինակներ Զարդուշտ Ալիզադեի[20], Էլդար Իսմայիլովի[21], Լեյլա Ալիևայի[22] աշխատությունները: Հաշվի առնելով որոշ հետազոտողների (Թ. Գոլց, Ս. Քորնել և ուրիշներ) կողմնապահ դիրքորոշումը ղարաբաղյան խնդրի վերաբերյալ՝ նրանց աշխատությունները ևս օգտագործվել են վերապահումներով: Թ. Գոլցի աշխատությունը կարևորվում է հատկապես այն պատճառով, որ նա իրադարձությունների ականատես է և, այդ ժամանակաշրջանում լրագրողական գործունեություն ծավալելով Ադրբեջանում, սերտ կապեր է ունեցել ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հատկանշական է նաև բրիտանացի լրագրող Թոմաս դե Վաալի աշխատությունը, որում հեղինակը հետպատերազմյան տարիներին Հայաստանում, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում անցկացրած հետազոտության ու հարցազրույցների հիման վրա փորձում է վերականգնել պատերազմի տարիներին հակամարտող պետությունների ներքաղաքական զարգացումների ընդհանուր պատկերը: Կատարելով հսկայածավալ աշխատանք՝ հեղինակը, այնուամենայնիվ, ձգտում է «հավասարության նշան» դնել ադրբեջանական ու հայկական կողմերի գործողությունների միջև, ուստի տարաբնույթ երևույթների գնահատումներում երբեմն «հարկադրված է» լինում դրսևորել որոշակի կողմնակալություն:

Յուրատեսակ գրական աղբյուր է Զարդուշտ Ալիզադեի՝ «Конец второй республики» մենագրությունը՝ նվիրված «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության ձևավորման պատմությանը, նախագահներ Այազ Մութալիբովի, Աբուլֆազ Էլչիբեյի վարած ներքին քաղաքականությանը և Հեյդար Ալիևի՝ իշխանության գալու պատճառների լուսաբանմանը: Զ. Ալիզադեն Ժողճակատի հիմնա-

---

[20] Տե՛ս **Ализаде З.,** Конец второй республики, http://www.azeribooks.narod.ru/politika/zardusht_alizade/konets_vtoroy_respubliki.htm, 07.03.2012.

[21] Տե՛ս **Исмаилов Э.,** Очерки по истории Азербайджана, Москва, 2010, 424 էջ:

[22] Советское наследие 22 года спустя: переодоление или консолидация? Под ред. Лейли Алиевой, Изд-во Qanun, Баку, 2013, 252 с.

դիրներից, դրա չափավոր թևի ներկայացուցիչներից էր և ակտիվ մասնակցություն էր ունեցել 1990-ականների ներքաղաքական զարգացումներում: Ավելի ուշ նա դարձավ Ադրբեջանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադիրներից մեկը: Նրա՝ որպես այս շրջադարձային ժամանակաշրջանի քաղաքական գործչի և իրադարձությունների մասնակցի մեկնաբանություններում ևս նկատվում են սուբյեկտիվ մոտեցումներ, որոնք հատկապես ակներև են Հեյդար Ալիևի գործունեությանը տրված գնահատականներում:

1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական գործընթացների ուսումնասիրության կարևորությունը նախ և առաջ պայմանավորված է ներկայիս Ադրբեջանի ներքաղաքական կյանքի գլխավոր առանձնահատկությունները հասկանալու անհրաժեշտությամբ: Մենագրության շրջանակներում ներկայացված նոր փաստերը օգնում են բացահայտել ժամանակակից Ադրբեջանի իշխանական համակարգում առկա բազմաթիվ խնդիրների պատճառներն ու ակունքները: Ուսումնասիրությունը կարևոր է նաև ղարաբաղյան խնդրի վերաբերյալ ադրբեջանական դիրքորոշման խորքային ընկալման և մեկնաբանման, այդ երկրի ներկայիս ղեկավարության գործելակերպի դրդապատճառների ու հետևանքների վերլուծության տեսանկյունից:

Նշված ժամանակահատվածում Ադրբեջանում ազգային, պետական և էթնիկ ինքնագիտակցության առանձնահատկությունների, ներքաղաքական պայքարի փուլերի, անկախացման գործընթացի յուրահատկությունների և, ի վերջո, ավտորիտար վարչակարգի ձևավորման պատճառների խոր և համակողմանի ուսումնասիրությունն արդիական է հատկապես մեր օրերում ղարաբաղյան պատերազմի վերսկսման վտանգի առկայության, բանակցային գործընթացում շոշափելի առաջխաղացման բացակայության և տարածաշրջանային բարդ իրադրության պայմաններում: